

# ՆԱԻԱՍԱՐԴ

## ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

ԹԻ 9

ԱՊՐԻԼ 2003

### ՀԱՅՐԵՆԻ ՖՈՒԹՊՈԼԸ ԵՒ ԱՆՈՐ ԱՆԺԽՏԵԼԻ ՎԵՐԵԼՔԸ

Մէկ ծաղիկով գարուն չի գար թէեւ, սակայն ֆուտպոլի պարագային այդքան ալ ճիշդ հաստատում չէ այս մէկը, որովհետեւ փաստօրէն այդ մէկ ծաղիկը եթէ նոյնիսկ գարուն չի բերեր, ապա անպայման որ գարնանամուտը կ'աւետէ...

Եւրօ-2004ի պտումի մրցաշարքին, Երեւանի մէջ Հիւսիսային Իրլանտայի դէմ տարուած յաղթանակը անկիւնադարձ մը կարելի է նկատել հայրենի ֆուտպոլի կեանքին մէջ, նշանակալից անկիւնադարձ մը: Հայաստանի ազգային խումբը ատենէ մը ի վեր սկսած է ինքզինք գերապանցել: Երեւոյթ մը, որ ո՛չ միայն ողջունելի է, այլեւ ապագայի հաշուոյն յոյս կը ներշնչէ:

Հիւսիսային Իրլանտայի դէմ մրցումին Հայաստանի յաղթանակը դիպումսով չէր: Այո՛, թէեւ մրցումը արարտեցաւ 1 - 0 արդիւնքով, սակայն ամբողջ 90 վայրկեան հայրենի կապը տիրապետեց եւ ոսկի առիթներ ունեցաւ կոյ նշանակելու, սակայն անոնցմէ միայն մէկը հասաւ նպատակին, այդ ալ մրցումին վերջին վայրկեաններուն: Ի՞նչ կը նշանակէ այս մէկը, եթէ ոչ յաղթելու վճռականութիւն, կամք, յարատեւ պայքար: Եւ այս բոլորը նախադրեալները չե՞ն յաղթանակի: Ահա թէ ինչո՛ւ այսքան ոգեւորուած ենք այս յաղթանակով, որ կրնայ հիմնաքարը կազմել յառաջիկայ յաղթանակներուն:

Ֆուտպոլը այն մարզն է, ուր որքան ներդրում կատարես, որքան աշխատանք տանիս՝ բարար չէ, եթէ այս բոլորին չ'ընկերակցիր յարատեւութիւնը: Եւ յարատեւ պայքարէ մը ետք կ'արդիւնաւորուի աշխատանքը ու անիկա կը սկսիլ տեսնուիլ դաշտերուն վրայ: Արդ, կը նշանակէ, թէ այդ հանգրուանին հասած ու անցած ենք արդէն, ինչ որ էական է: Հիմա կը մնայ, որ նախ շարունակենք պայքարը միեւնոյն թափով, ապա փորձենք ամէն օր քիչ մը աւելի յառաջանալ թէ՛ թեքնիք, թէ՛ ֆուտպոլի բոլոր տուեալները ամբողջացնելու իմաստով, որպէսզի ի վերջոյ հասնինք ընդունելի մակարդակի, մակարդակ մը, որ իրապէս պատիւ բերէ մեր երկրին ու համայն հայութեան: Մեզի չեն պակսիր այս հոլովոյթը յաջողութեամբ պսակելու գործօնները, սկսեալ՝ տաղանդէն: Ունինք տաղանդաւոր ֆուտպոլիստներ, որոնք արդէն նուաճած են պահանջուած մակարդակը եւ որոնք կը կազմեն հիմնաքարը վաղուան կայուն խումբին: Կը սպասենք եւ վստահ ենք, որ հետպիտէտ պիտի բազմապատկուին Հիւսիսային Իրլանտայի ճակատագիրին ենթարկուող կազմերը:

### ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱԵՒՍԱՑԱԿ ԱՂԶԿԱՆՑ ԱԽՈՅԵԱՆ, ԻՍԿ Ն.Մ.Ը.Մ. ԱՆԹՈՒԼԻԱՄ ՅՐԴ

(Մանրամասնութիւնները տեսնել՝ էջ 3)



### ՓԻՆԿ ՓՈՆԿ

### ԼԱՐԱ ՔԵԶԵՊԱՇԵԱՆ ԲԱՐՉՐԱՅՈՒՑ ԲԱԺԱԿԸ

Լիբանանի փինկ փոնկի գարնանային արարտականին, որ տեղի ունեցաւ «Մոն Լա Սալ»ի մէջ, բաւական տաք եւ մարտօն մրցումէ մը ետք վերջ գտաւ աղջկանց հանդիպումը, որ եղաւ զուտ Հ.Մ.Ը.Մ.ական: Թէեւ Լիզա Պարիքեան բաւական պայքարեցաւ տիրանալու համար տիտղոսին, սակայն Լարա Քէչէպաշեան ինք տարաւ վերջնական յաղթանակը, արձանագրելով 4 - 3 արդիւնք մը:

Տղոց մրցաշարքին գծով, Հ.Մ.Ը.Մ.ական Ռազմիկ Շեմեմեան, քառորդ արարտականին պարտութիւն մը կրելէ ետք Մոհամէտ Շըրքաուիէն (3 -



1), մրցաշարքը արարտեց հինգերորդ դիրքին վրայ: Արարտականին, Ռաշիտ Պըպաօ 4 - 2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Շըրքաուիէն, տիրացաւ տիտղոսին: Նշենք, թէ տղոց կիսարարտականին հասնող չորս մարզիկներն ալ Ռիատի մաս կը կազմէին:



### ԹԵՆԻՍԸ՝ ՀԻՆԿԻՍԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵԱՆ

(Մանրամասնութիւնները տեսնել՝ էջ 4)

ملحق أزياءك

# ԼԵՒՈՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ՀԵՏ

**ՀԱՐՑՈՒՄ.-** Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն համար ծանօթ անուն մըն էս: Արդեօք կարելի՞ է հակիրճ տեղեկութիւն մը տալ, թէ ե՞րբ եւ ի՞նչպէս միացար Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի ներկայացուցչական խումբին:

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** Նախքան Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի ներկայացուցչական խումբին միանալս (1992ին), մաս կազմած եմ Պուրճ Համուտի շատ մը խումբերու (1982էն սկսեալ), ինչպէս՝ «Վրէժ», «Աւարայր», «Սիւսանթո» եւ ուրիշներ: Ապա մաս կազմեցի Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի կրտսերներուն:

1992ին, հայրենի մարզիչ Յովհաննէս Զանազանեանի օրերուն էր, որ պաշտօնապէս մաս կազմեցի խումբին: Վստահաբար առաջին շրջանին իբրեւ պահեստի մարզիկ նկատի առնուեցայ եւ տարիներու ընթացքին փորձառութիւն ձեռք ձգելով, 1995էն սկսեալ խումբին մէջ տեղս ունեցայ իբրեւ հիմնական մարզիկ:

**Հ.-** Անցեալ եղանակին, Լիբանանի ֆութպոլի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Հ.Մ.Ը.Մ. փոխադրուեցաւ Բ. դասակարգ: Խումբին մաս կը կազմէիր նաեւ դուն: Արդեօք ի՞նչ զգացում ունեցար, երբ դէմ յանդիման եկար այդ դառն իրականութեան:

**Պ.-** Վստահաբար ռեւէ մարզիկ չի ցանկար իր խումբին Բ. դասակարգ փոխադրուիլը: Սակայն ցաւօք սրտի, այդ մէկը պատահեցաւ, որուն մասին ներկայիս խօսիլը այլեւս անհիմաստ է: Խումբը մեր օրերուն էր, որ Բ. դասակարգ փոխադրուեցաւ, հետեւաբար մեր պարտաւորութիւնն է զայն վերադարձնել իր նախկին դիրքին: Յառաջիկայ Մայիս 28ի տողանցքին պէտք է հպարտանքի օր մը ապրինք բոլորս: Այս տարի մայիսեան փառատօնին վճռած ենք մեր գլուխը բարձր տողանցել, որովհետեւ վերջին քանի մը տարիներուն, յատկապէս անցեալ տարի այդպէս չէր պարագան:

**Հ.-** Բ. դասակարգի ախոյեանութեան 2002 - 2003 եղանակի աւարտին մնացած է քանի մը հանգրուան միայն եւ խումբը մեծ քայլերով կ'ուղղուի դէպի տիտղոս, վերստին բարձրանալու համար **Ա. դասակարգ:** Արդեօք ի՞նչ ունիս ըսելիք այս տարուան խումբին արձանագրած արդիւնքներուն մասին:

**Պ.-** Պէտք է ըսել, որ խումբին մաս կազմող իւրաքանչիւր մարզիկի մօտ այս եղանակին տարբեր զգացում մը կայ, որովհետեւ մարզիկ - մարզիչ - պատասխանատու - համակիր քառեակը կը ներկայանայ միաձոյլ: Երեւոյթ մը, որ կը կարծես, թէ տարիներէ ի վեր բացակայ էր մեր մէջ: Արդեօք խումբին Բ. դասակարգ փոխադրուելէն ե՞տք է, որ անդրադարձանք, թէ ճիշդը այս է, չեմ գիտեր: Յամենայնդէպս այսուհետեւ այս ձեւով շարունակելը կը մնայ գլխաւոր հրամայականը:

**Հ.-** Մարզիչ - մարզիկ փոխարարութիւնները արդեօք ի՞նչպէս են:

**Պ.-** Մարզիչ Վաչէ Սարգիսեան իւրաքանչիւր մարզիկի հետ միշտ եղբայրական ձեւով կը մօտենայ: Անշուշտ բարեկամ կամ ընկեր ըլլալէ աւելի ան կը մնայ մարզիչ եւ գիտակից իր պաշտօնին: Ան խումբին դէպքէն է եւ անոր ցուցմունքներուն պարտաւոր եմ ենթարկուելու բոլոր մարզիկները անխտիր, որովհետեւ ան կ'աշխատի ի շահ Հ.Մ.Ը.Մ.ի:

Ոչ մէկ ատեն հարցեր կամ անհամ դէպքեր կը ծագին մարզիչին եւ մարզիկներուն միջեւ: Ասոր լուսազոյն ապացոյցն է արդէն խումբին արձանագրած փայլուն արդիւնքները:

Խումբ մը, որ ներքին հարցեր ունի, չի կրնար յառաջխաղացք արձանագրել:

**Հ.-** Կարգ մը մրցումներու երբեմն կը նշանակուիս խմբապետ: Արդեօք յաւելեալ պատասխանատուութիւն մը կը զգաս այդ պահուն:

**Պ.-** Խմբապետը ըլլամ կամ ոչ, ես միշտ ալ գիտակից կը մնամ իմ պարտականութեանս: Ոչ մէկ ճիգ կը խնայեմ խումբին հետ յաղթանակ արձանագրելու համար:

Մարզիչին կողմէ խմբապետ նշանակուիլս երբեք պատճառ չի դառնար, որ ինքզինքս գերադաս նկատեմ խմբակիցներէս: Իւրաքանչիւր մրցումի ընթացքին դաշտ կը ներկայանամ նոյն պատասխանատուութեամբ եւ գիտակցութեամբ, ոչ մէկ ատեն փորձելով որեւէ հարց ստեղծել դաշտին վրայ: Ընդհակառակը, միշտ ալ կը միջամտեմ քիչ մը «տաք» մարզիկները հանդարտեցնելու համար:

**Հ.-** Ի՞նչ կը զգաս եթէ քու սխալիդ պատճառով խումբդ կոլ ստանայ եւ պարտութիւն կրէ:

**Պ.-** Մարզիչը մեզի միշտ ալ կը թելադրէ, որ եթէ պատահի, որ քու սխալովդ խումբը կոլ ստանայ, պէտք չէ ազդուիս եւ պատահածը պէտք է մոռնաս առաւելագոյն տասը երկվայրկեանէն: Եթէ պատահի, որ չյաջողեցար այդ մէկը իրականացրնել, ամբողջութեամբ դուրս կը մնաս խաղին մթնոլորտէն:

Վստահաբար յետսպահները յառաջապահներէն եւ միջնապահներէն աւելի նուազ սխալներ պէտք է կատարեն, որովհետեւ անոնց ամէնէն պզտիկ սխալը կրնայ մահացու հարուած մը հասցնել խումբին,

Կը փորձեմ իւրաքանչիւր մրցումի ընթացքին նուազագոյն չափով սխալ կատարել:

**Հ.-** Ի՞նչ ունիս ըսելիք Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն մասին:  
**Պ.-** Կասկածէ վեր է, որ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները խումբին 12րդ մարզիկն են: Անոնց ներկայութեան՝ խումբը միշտ ալ իր առաւելագոյնը կը փորձէ տալ, մանաւանդ որ համակիրները բնականաբար կ'ըլլան պահանջկոտ. որքան որ տաս, աւելին կը պահանջեն:  
Այս եղանակին անոնք փաստեցին, որ կը մնան խումբին տէրը:



# ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՆԻՍԱՑԱԲ ԱՂՋԿԱՆՑ ԱԽՈՅԵԱՆ, ԻՄԿ Ն.Մ.Ը.Մ. ԱՆԹՐԱՆԻԿՍ 3ԲԴ



Հ.Մ.Ը.Մ. Անթրիխասի կազմը

Մարտի վերջին շաբաթը վարագոյրը իջաւ պասքեթպոլի Լիբանանի աղջրկանց ախոյեանութեան մրցումներուն վրայ, հայկական երկու կազմերու փայլուն արդիւնքներով: Արդարեւ, տիտղոսի մրցումին 3 - 1 արդիւնքով Սաժէսը պարտութեան մատնելէ ետք, Անդրանիկի աղջիկները հանդիսացան Լիբանանի ախոյեան, միաժամանակ արձանագրելով տուպլէն (Անդրանիկ շահած էր նաեւ բաժակը):


Հ.Մ.Ը.Մ. Անթրիխասի կազմը, որ ամբողջ ախոյեանութեան ընթացքին կը գտնուէր պարագլուխի իր դիրքերուն վրայ, գրաւեց պատուաբեր երրորդ դիրքը: Հակառակ այն իրողութեան, որ երրորդ-չորրորդ դիրքերը ճշդելու համար Էօ. Էն. Պի.ի հետ կատարուած մրցումներէն առաջինին Հ.Մ.Ը.Մ. 66 - 49 արդիւնքով պարտութիւն կրեց, սակայն խումբը ինքզինք վերագտնելով արձանագրեց 2 յաջորդական յաղթանակներ (70 - 56, 64 - 54) եւ ապահովեց երրորդ դիրքը:

Անդրանիկ - Սաժէս  
գագաթի ճակատումէն

## ԳԵՂԱՍԱՀՔ

# 5ԲԴ ԱՆԳԱՄ ԲԼԼԱԼՈՎ ՄԻՇԷԼ ՔՈՒԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ

Անցնող շաբաթավերջին ւարտած գեղասահքի աղջկանց աշխարհի ախոյեանութեան մրցումներուն 22ամեայ Միշէլ Քուան 5րդ անգամ ըլլալով տիրացաւ տիտղոսին: Ազատ յայտագիրի ընթացքին Քուանի կատարումը անզուգական էր: Տակաւին ան սառոյցին վրայ իր հրաշալի ելոյթը չէր ւարտած, երբ ժողովորդին ուրախութեան բացագանչութիւնները երաժշտութիւնը գրեթէ անլսելի դարձուցին. սակայն Քուան չկորսնցուց պաղարհունութիւնը եւ կատարումը հասցուց իր ւարտին: Գերազանց միշտը իրար յաջորդեցին: Իր թեքնիքին համար Քուան արժանա-



ցաւ 5,7 - 5,9ի միջեւ տարուերող միշտը: Ներկայացումի միշտը առաւել եւս բարձր էին եւ ան մոյնիսկ երկու 6/6 միշտը ստացաւ:

Քուան իր հայրենակիցներուն խլացնող ծափողջոյններուն տարափին տակ ստացաւ ոսկի մետալը:

Ուաշինգթոնի մէջ տեղի ունեցող աշխարհի ախոյեանութեան երկրորդ հանդիսացաւ ռուս ելենա Սոքոլովա, իսկ ճափոնցի Ֆիւմի Սուկուրի յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով տիրացաւ պրոնզէ մետալին:

«Մետալները պարգապէս մետալներ են՝ արեւի ոչինչ, կարելորդ բազմութեան դիմաց կատարումը եւ անբացատրելի զգացումներն են», ըսաւ Քուան:

Մեկնաբաններ ըսին, թէ հակառակ իրողութեան, որ Յունուարին, Միացեալ Նահանգներու ախոյեանութեան տիրանալէն ետք Քուան ոչ մէկ մրցաշարքի մասնակցած էր, անոր կատարումը ոչինչ կորսնցուցած էր իր բարձր մակարդակէն:

Քուան, որ նախապէս 1996ին, 1998ին, 2000ին եւ 2001ին տիրացած է աշխարհի ախոյեանութեան, գեղասահքի թագուհիի իր թագին վրայ հինգերորդ ադամանդ մը եւս արեւցոյց: Սակայն այդ թագէն կը պակսի մեծագոյն ադամանդը: Արդարեւ, Քուան ցարդ չէ կրցած տիրանալ Ողիմպիական խաղերու ոսկի մետալին, որ կը նկատուի գեղասահքի կարեւորագոյն մտանումը:

Ախոյեանութեան օրերուն Քուանի համակիր մը իր բարձրացուցած պաստառին վրայ գրած էր՝ «Քուան 2006. կը հաւատանք»:

Քուանի կը մնայ այդ մէկը արդարացնել...



# ԹԵՆԻՍԸ՝ ՀԻՆԿԻՍԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵԱՆ

Թենիսը այն մարզախաղերէն է, որ միշտ ալ յաջողած է խանդավառել իր սիրահարները: Անկախ այն մարզախաղն է, որ խորամանկութիւնն ու ուժը մէկտեղելով՝ կը ստեղծէ այնպիսի խանդավառ մթնոլորտ մը, որուն առջեւ հանդիսատեսները այլընտրանք չունին, բացի իրենց նայուածքները դեղին գնդակի մը գերին դարձնելէ եւ իրենց գլուխները աչ ու ձախ տարութեւիլէ՝ հետեւելու համար այդ գնդակին մերթ արագ ու զօրաւոր եւ մերթ խաբող ու խորամանկ թռիչքներուն: Այս բոլորը հետաքրքրական են, բայց աւելի հետաքրքրականը այն է,

թէ մրցումին ընթացքին ինչ ալ ըլլայ արդիւնքը, անկախ վերջնական չէ, որովհետեւ պարտութենէն միայն մէկ կէտ հեռու եղող խաղացող մը կրնայ սքանչելի խաղարկութիւն մը ցուցաբերելով, յանկա՛րժ դառնալ մրցումին տէրն ու տիրականը եւ ընդհանուր պատկերը շրջելով տանիլ վերջնական յաղթանակը:

Անշո՛ւշտ, նման պատկեր մը շատ աւելի գեղեցիկ եւ հետաքրքրական կը դարձնէ թենիսը, բայցեւայնպէս կրնայ անկիւնադարձ մը ըլլալ խնդրոյ առարկայ մարզիկին ասպարէզէն ներս:

Այս էր պարագան զուգեթիսի Մարթինա Հինկիսին, որ պատանի հասակին իր սքանչելի խաղարկութեամբ հմայելէ ետք թենիսի մասնագէտներն ու սիրահարները, վերջերս զարմացուց եւ ապշեցուց զանոնք, երբ անակրնկալօրէն յայտարարեց, թէ գլխաւորաբար վիրաւոր ըլլալուն պատճառով պիտի լքէ թենիսը:

Անշուշտ այս լուրը ցնցեց ամբողջ թենիսի աշխարհը, որովհետեւ հարցը ո՛ր անկիւնէն ալ դիտենք անբնական կը գտնենք: Առաջին հերթին, 22 տարեկան մարզիկի մը հանգստեան կոչուիլը արդէն իսկ տարօրինակ երեւոյթ մըն է, իսկ աւելի ցաւալին այն է, թէ Հինկիսի նման երիտասարդ, աշխուժ եւ խելացի խաղացողի մը հրաժարումով, տաղանդի, վայելչութեան եւ խորամանկութեան հասկացողութիւնը ամբողջովին կորսուած կը թուի ըլլալ աղջիկներու թենիսէն ներս, որ հետզհետէ կը սկսի կառավարուիլ միայն ու միայն ֆիզիքական ուժով եւ կարողութեամբ:

Արդարեւ, ներկայի աղջիկներու թենիսի միահեծան ախոյեանութիւնները Վինըս եւ Սերենա Ուիլիքսն քոյրերն են, որոնք իրենց զօրաւոր սրբվերով ու հարուածներով կ'անդամալուծեն իրենց մրցակիցները:

Այո՛, մեզմէ ոչ մէկը կրնայ առարկել, թէ Ուիլիքսն քոյրերը արժանի չեն իրենց այս դիրքին, փաստօրէն, անոնք տիրացած են վերջին 11 կրան շլէմի տիտղոսներուն եւ տակաւին նոյն թափով ալ կը շարունակեն իրենց յաղթական երթը, ինչպէս նախատեսած էր իրենց մարզիչ-հայրը՝ Ռիչըրտ Ուիլիքսն, բայց արդեօ՞ք այս է այն պատկերը,





Մարթինա Հինկիս ծնած է Սլովաքիոյ մէջ՝ 1981ին: Անոր մայրը, որ արհեստավարժ թենիսիստ մը եղած է, 2 տարեկանին իսկ իրեն կը սորվեցնէ թենիսը: Երբ Հինկիս 4 տարեկան էր, մայրը կ'ամուսնալուծուի եւ աւելի ուշ կ'ամուսնանայ գոլֆերիստի մը հետ եւ այսպիսով անոնք կը փոխադրուին Ջոնիսթըն: Հինկիս 14 տարեկանին արհեստավարժ կը դառնայ միջոց իր մարզիչ ունենալով իր մայրը եւ 1997ին Մարի Փիրսը պարտութեան մատնելով կը տիրանայ Աւստրալիոյ բաց մրցաշարքին եւ կը դառնայ պատմութեան ամէնէն կրտսեր մարզիկը, որ կը տիրանայ կրան շլէմի մը: Երեք ամիս ետք, ան կը հասնի ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքին եւ այս անգամ կը դառնայ ամէնէն երիտասարդ Աշխարհի թիւ 1ը (16 տարեկան եւ 6 ամիս հասակին):

1997 թուականը կ'ըլլայ իր փառքի տարին: Ան կը տիրանայ Ուիմպլըյտընի բաժակին եւ կը դառնայ առաջին մարզիկը, որ կը հասնի 4 կրան շլէմներու աւարտականին, իրագործում մը, որ վերջին անգամ կատարած էր Թեթի Կրաֆ: Նոյն տարին թեթեւօրէն կը վիրաւորուի, սակայն իր երթը շարունակելով այդ տարւան ընթացքին իր շահած բաժակներուն թիւը կը հասցնէ 13ի, որ 90ական թուականներուն համար մրցանիշ մըն էր: Ան բաւական երկար ժամանակ կը մնայ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքին վրայ եւ կը տիրանայ 5 կրան շլէմի տիտղոսներու եւ սակայն ամէն բան կը յեղաշրջուի 1999ի Ռոլան Կարոսի բաց մրցաշարքի աւարտականին, երբ Հինկիս իրաւարարին մէկ որոշումէն ընդվզած, կը գայրանայ եւ բաժակը կորսնցնելով մէկտեղ կը շահի նաեւ համակիրներուն հակակրանքը: Այստեղ է, որ կը սկսի դժբախտութիւններու շարքը: Ան կը սկսի նահանջել եւ 2001ին վիրաւորուելով՝ վիրաբուժութեան կ'ենթարկուի եւ որոշ ժամանակի մը համար հեռու կը մնայ թենիսի դաշտերէն: Վերադառնալէ ետք, ան Սիտնիի մէջ տիտղոս մը կը շահի եւ սակայն չի յաջողիր վերագտնել իր անցեալի փառքը եւ այս անգամ Աւստրալիոյ բաց մրցաշարքի աւարտականին տեղի կու տայ Քափրիաթի առջեւ: Աւելի ուշ, անոր ոտքը դարձեալ հարցեր կը յարուցանէ եւ ան յուսահատած՝ կ'որոշէ վերջ մը դնել իր ուրանամեայ ասպարէզին եւ աւելի ժամանակ տրամադրել իր ուսումին, մանաւանդ որ Սերենա եւ Վինըս բաւական լաւ վիճակի մէջ են եւ երբեք մտադիր չեն իրենց դիրքը զիջելու Հինկիսին:

որուն թենիսի սիրահարները կ'ուզեն հանդիսատես ըլլալ. անոնք համաձայն են արդեօք, որ թենիսը եւ մանաւանդ աղջիկներու թենիսը, որ միշտ ալ յատկանշուած է իր վայելչութեամբ, դառնայ կոշտ ու կոպիտ խաղ մը, որուն տէրն ու տիրականը ֆիզիքական ուժն է եւ որուն կէտերուն մեծամասնութիւնը արդիւնք է զօրաւոր հարուածներու փոխան՝ գեղեցիկ եւ ճշգրիտ հարուածներու:

Թերես... բայց հարցը այն է, թէ այս պայմաններուն մէջ, աղջիկներու թենիսը սկսած է կորսնցնել իր այլազանութիւնը եւ աւելի՛ն՝ Տապրլ-

ե ու . Թ . Է . յ . Ի ընդհանուր դասաւորումը անշարժ պատկեր մը դարձած է, որուն վերին դիրքերուն վրայ միշտ կը շողան Ուիլիըմս քոյրերուն անունները: Անտարկէլի է, որ թենիսը պէտք ունի նոր եւ խորամանկ խաղացողներու, որոնք կրնան գէթ որոշ ժամանակի մը համար վերջ մը դնել Ուիլիըմսներուն յառաջխաղացքին եւ փաստել, որ թենիսը ոչ միայն ուժով, այլ նաեւ՝



Կրաֆ

խորամանկութեամբ եւ թեքնիքով է: Թենիսը պէտք ունի Մարիա Պուէնոներու (60ականներու պրագիլցի խաղացող), Իվոն Կուկլըկոնկերու (աւստրալիացի) եւ ափսոս'... Մարթինա Հինկիսներու:

Մեզմէ շատերը կրնան համաձայն չըլլալ եւ փաստարկել, թէ Հինկիս նախապէս առիթը ունեցած է դէմ յամդիման գալու Ուիլիըմս քոյրերուն հետ եւ սակայն պարտուած է, հետեւաբար ան պէտք եղած մակարդակը չունի եւ շատ հեռու է Ուիլիըմսները գահընկէց ընելէ, սակայն պէտք չէ հարցը միայն մէկ անկիւնէ դիտել, այլ՝ պէտք է պրպտել եւ գտնել Հինկիսի այս կաղացումին դրդապատճառները, վայրկեան մը մոռնալով երկար ժամանակէ ի վեր վիրաւոր ըլլալու պատճառը:



Սերենա

Արդարեւ, Հինկիս, որ 16 տարեկանին հասաւ իր ասպարէզի գագաթին եւ 2 տարի շարունակ իր վրայ կեդրոնացուց լուսարձակները, իր պատանեկան խանդավառութեամբ պարտութեան մատնեց շատ մը տիտաններ եւ սակայն ասով մէկտեղ ան շատ արագ եւ մեծ դիրութեամբ տապալեցաւ եւ քայքայուեցաւ: Պատճառը: Անփորձութիւն եւ քիչ մը չափազանց հպարտութիւն:

Այո՛ հպարտութիւն, որովհետեւ Հինկիս հասաւ այնպիսի բարձունքի մը, որ մարդ չի կրնար ձեռքերը ծալած նստիլ առանց որոշ հպարտութեան ու գոհունակութեան: Այդ մէկը բնական է, սակայն Հինկիսի պարագային հպարտութիւնը չափէն աւելի էր: Այո՛, ան անպարտելի էր եւ իր սքանչելի ու խորամանկ խաղարկութեամբ իրաքանչիւր մրցաշարքի գէթ աւարտականին կը հասներ, այսպիսով մեծ թիւով բաժակներու տիրանալով եւ միեւնոյն ժամանակ ալ նաեւ մեծ գումարներ դիզելով, սակայն ան չէր անդրադառնար, թէ այդ մեծ գումարներն ու շողշողուն բաժակները իր թափը կը կտրեն եւ պայքարելու յարատեւ

Ն. Պ.

(Շար.ը՝ էջ 7)

# ՊԱՍՔԵԹՊՈՒԼԸ ԴՈՒՐՍ ՊԻՏԻ ԳԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՄՔՈՂՋԱՏԻՐՈՒԹԵՆԷՆ



Երբ Տալաս Մավրրիքս խումբի աստղերէն Տիրք Նովիթսքի առաջին անգամ իր աչ ոտքը դրաւ Միացեալ Նահանգներու հողին վրայ, արդէն զգաց ապրելակերպի եւ պասքեթպոլի կիրարկումին տարբերութիւնը իր բնօրրան Գերմանիոյ եւ Էն. Պի. Էյ.ի միջեւ: Բարտիի հասակով Նովիթսքի սկզբնական շրջանին նկատուեցաւ «տիֆենս»-ի համար անկարող, ինչպէս նաեւ «կակուղ» պասքեթպոլիստ, եւ այդ օրերուն յաճախ զբաղեցաւ պահեստի աթոռները «տաքցնելով»: Այսօր Նովիթսքի «Անքըլ Սէմ»-էն աւելի ամերիկացի կը թուի ըլլալ եւ Էն. Պի. Էյ.ի վեցերորդ սքորըրն է:

Նովիթսքի ինքզինք օտարական զգալու ոչ մէկ պատճառ ունի. ան արդէն վարժուած է ամերիկեան բարբերուն: Արդարեւ, ի տարբերութիւն 1980ականներուն, երբ հիներիացի Հաքիմ Օլաճուոնի եւ խրուսթ Տրազէն Փեթրովիչի նմանները շրջապատուած էին ամերիկացի մարզիչներու ջախջախիչ մեծամասնութեամբ, այս եղանակին 34 տարբեր կրկիրներէ եւ տարածաշրջաններէ 65 պասքեթպոլիստներ խարխիս նետեցին «նոր աշխարհ»-ի ափերուն, սինչ բազմաթիւ ուրիշներ իրենց վիզաները կը պատրաստեն:

Միացեալ Նահանգները փոթորկող «օտար» պասքեթպոլիստներու թուարկումը կրնայ երկարիլ: Յիշենք չինացի Եաօ Մինկը, քանատացի Սթիւ Նէշը, մեքսիքացի Էտուարտօ Նաժերան, սպանացի Փաու Կազօլը, ֆրանսացի Թոնի Փարքըրը, Սերպիայէն՝ Փէյա Սթոյաքովիչը, Արժանթինէն՝ Էմանուէլ Ժինոպիլին, Պրագիլէն՝ Նէնէ Հիլարիոն, Նիկերիայէն՝ Միքայէլ Օլոփովանտին, Ռուսիայէն՝ Անտրէ Բիրիենքըն...: «Պենեթոն»-ի ծանուցումները յիշեցնող այս աստղահոյլը արդէն տիրացած է ամերիկացիներու մտքերուն, սրտերուն եւ... տոլարներուն: Զարմանալու կարիք չկայ. փաստերը սեղանին վրայ են. եղանակի լաւագոյն երեք խումբերը, որոնք ամէնէն աւելի իրաւունք ունին Լոս Անճելըս Լէյքըրզը գահազրկելու մասին երազելու՝ Քինկզ, Մավրրիքս եւ Սփըրզ յազեցած են օտարականներով: Սաքրամենթօ Քինկզի համակիրները, ակնարկելով իրենց խումբին, որուն մէջ երկու սերպեր կան՝ Սթոյաքովիչ եւ Տիվաչ, «Սաքրամենթօ Սերպեր» անուանած են զայն:

Այս բոլորը սակայն անակնկալներ չեն Էն. Պի. Էյ.ի պատասխանատուներուն համար, որոնք իրենց միութիւնը կը փորձեն միջազգային «վաճառանիշ»-ի վերածել: Այս ուղղութեամբ աշխատանքներուն նախաքայլը կարելի է համարել Պարսելոնայի Ողիմպիական խաղերուն «Տրիմ Թիմ»-ի անդրանիկ մասնակցութիւնը: Այսօր, վաճառող Էն. Պի. Էյ.ի անուններ եւ լոկոներ կրող տարազներու եւ սարքերու 20 առ հարիւրը Միացեալ Նահանգներէն դուրս գտնուող շուկաներու մէջ է եւ այս վաճառքը տարեկան 430 միլիոն տոլարի գուտ շահ կ'ապահովէ: «Էն. Պի. Էյ. Սիթի» մը կառուցման ընթացքի մէջ է Տոմինիքեան Հանրապետութեան մէջ եւ Էն. Պի. Էյ.ի պոլիթիկներ կարելի է գտնել Սպանիոյ եւ Եւրոպական այլ երկիրներու հսկայ վաճառասահներուն մէջ: Պատկերասփիւռի կայաններէն Էն. Պի. Էյ.ի ապահոված 900 միլիոն տոլար շահին 15 առ հարիւրը կու գայ 212 երկիրներու եւ տարածաշրջաններու մէջ գործող 148 պատկերասփիւռի կայաններէ: Էն. Պի. Էյ.ի պաշտօնական կայքը (www.nba.com) այցելողներուն 40 առ հարիւրը Միացեալ Նահանգներէն դուրս կը գտնուի:

Սակայն այս բոլորը սկիզբն է պարզապէս: Ծրագիրներ կը մշակուին Եւրոպայի մէջ Էն. Պի. Էյ.ի խումբեր կազմելու եւ գերարդիական




պասքեթպոլի դաշտեր կառուցելու: Առաջարկներ ներկայացուած են Էն. Պի. Էյ.ի ամերիկացի եւ օտար պասքեթպոլիստներու միջեւ «Օլ - Սթար» ճակատամերկայցմակերպելու, եւ այլն:

Պասքեթպոլը թէեւ տակաւին իր ժողովրդականութեամբ չի հասնիր ֆութպոլին եւ միշտ ալ բաւարարուած է աշխարհի թիւ երկու մարզաձեւը ըլլալով, սակայն մեկնաբաններ զայն կը նկատեն ամէնէն արագ տարածուող խաղը: Այո՛, աշխարհի տարածքին 1,25 միլիառ ֆութպոլի համակիրներ կան, սակայն զգուշ՝ պասքեթը պէտք չէ թերագնահատել: Ֆութպոլի չափ առանց մեծ գումարներ ծախսելու կարելի է կիրարկել պասքեթպոլը, եւ այդ պատճառով ալ, նոյնիսկ Նիկերիոյ նման աղքատ երկրի մը մէջ, բազմաթիւ տուներ բակերը օժտուած են պասքեթի «կողով»ներով, իսկ Մեքսիքայի մէջ դժուար է գտնել քաղաք մը կամ ւան մը, որ չունի իր պասքեթի դաշտը: Զինաստանի մէջ դպրոցականներու ամէնէն նախասիրած մարզախաղը պասքեթպոլն է, եւ 250 միլիոն մարզիկներ այնտեղ կը կիրարկեն այս մարզաձեւը:

Եւ մինչ աշխարհի պասքեթպոլիստներէն շատերուն աչքերը յառած են դէպի Էն. Պի. Էյ., այս վերջինը, իր կարգին, ակնդէտ կը հետեւի տարբեր երկիրներու ազգային ախոյեանութիւններուն: Չկայ Էն. Պի. Էյ.ի խումբ մը, որ հեռանկարային պասքեթպոլիստներ փնտրող «որսորդներ» չունի աշխարհի տարբեր երկիրներու մէջ: Իբրեւ արդիւնք, Էն. Պի. Էյ.ի մէջ օտարներուն թիւը այնպիսի վերելք կ'արձանագրէ, որ կարգ մը մասնագէտներ դիտել կու տան, թէ տասնամեակ մը ետք Էն. Պի. Էյ.ի մարզիկներուն կէտը օտարականներ պիտի ըլլան: Սակայն պահպանողականներ կը կարծեն, թէ աշխարհին երբեք կարելի պիտի չըլլայ հաւասարիլ ամերիկացիներու պասքեթպոլի բնատուր տաղանդին:

Գերակայութեան բարդո՞յթ, թէ ճշմարտութիւն, ժամանակը միայն ցոյց կու տայ:

# ՌՈՒՄԱՆԱՑԻ ՍԹՈՅՔԱ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ ՄԱՐԶԻԶ



Ուրբաթ, 21 Մարտին, «Եւրօ - 2004»-ի գտումի մրցումներուն ծիրէն ներս Հայաստանի հաւաքականի ունենալիք ճակատումէն միայն շաբաթ մը առաջ, Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնը ազգային խումբի մարզիչ նշանակեց ռումանացի Միքայէլ Սթոյքան:

«Ան մէկ տարուան համաձայնագիր կնքած է մեզի հետ եւ անկէ ետք պիտի ուսումնասիրենք պայմանագրութիւնը երկարաձգելու հարցը», լրագրողներուն յայտնեց Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնի նախագահ Ռուբէն Հայրապետեան:

Սթոյքան, որ մէկ տարուան ընթացքին Հայաստանի հաւաքականի մարզիչ նշանակուած չորրորդ անձն է, պիտի փոխարինէ արժանօրէնացի Օսքար Լոփէզը: Ծանօթ է, որ Լոփէզ յաւելում պահանջելէն երկու

ամիս ետք հեռացուած էր իր պաշտօնէն: Հայրապետեան քսաւ, թէ Լոփէզ տարեկան 300,000 տոլար պահանջած է, մինչ նախապէս համաձայնուած գումարը 120,000 տոլար էր:

Սթոյքան, որ նախապէս մարզած է Սթեւոյի եւ Տինամօ Պուրլէշի մասն մեծ խումբեր, պիտի փորձէ մէկ շաբթուան կարճ ժամանակաշրջանին մէջ հարկ եղած նախապատրաստական աշխատանքները կատարել, նախքան Հիւսիսային Իրլանտայի կազմին հետ ճակատումը, զոր կը հիւրընկալէ Հայաստան:

Նշենք, որ անկէ ետք Հայաստանի կազմը պիտի ուղղուի Սպանիա, մրցելու համար խմբակին դասաւորումը գլխաւորող տեղւոյն ազգային խումբին հետ:

## ԹԵՆԻՍԸ՝ ՀԻՆԿԻՄԻ ...

Ծարուակուած՝ Տրդ ԷՂԵՆ

Ոգին կը մարեն: Եւ շուտով, Ծթեֆի Կրաֆ եկաւ աղոտոր դաս մը տալու զուիցերիացի մանուկին: 1999ի Ֆրանսայի բաց մրցաշարքի (Ռոլան Կարոս) ասարտականին էր, երբ յաղթանակէն միայն 3 գնդակ հեռու Հինկիս, իրաւարարին տուած առարկելի մէկ որոշումին վրայ գայրացաւ եւ իր կեդրոնացումը կորսնցնելով՝ 2 տարուան փառքէն ետք, խոնարհեցաւ գերմանացի վերերան՝ Կրաֆին առջեւ: Այդ օրն էր, երբ անպարտելի Հինկիս ինքզինք գտաւ ցաւալի իրականութեան առջեւ եւ աչքերը բանալով արթնցաւ 2 տարի տեւած երազէն: Այդ օրն էր, երբ Հինկիս լացաւ եւ իր ոչ-մարզավայել կեցուածքին ու հպարտութեան պատճառով արժանացաւ համակիրներուն հակակրանքին: Փառքի օրերը վերջ գտած էին եւ բաժակը ստացած միջոցին Կրաֆի արտասանած քաջալերանքի խօսքերը երբեք չկրցան մխիթարել Հինկիսը, որ հետզհետէ սկսաւ նահանջել եւ ահա վերջերս յաւիտեան ընկղմեցաւ...

Մնացեալը յստակ է արդէն. Հինկիսի նահանջով, Տէվրնփորթի, Քափրիաթի եւ Սերենայի ու Վինըսի մասն խաղացողներ շունչ առին եւ սկսան իրենց վերելքին եւ այսպէս քանի մը տարուան մէջ աղջիկներու թեմիսը հասաւ ներկայի իր պարզուած վիճակին:

Այսուհանդերձ, պէտք չէ յուսահատիլ, որովհետեւ ինչ ալ ըլլան պայմանները, մրցակցութիւնը միշտ ալ կը մնայ եւ թերեւս ալ այս վիճակը օգնէ, որ Ուիլիըմսներուն մրցակիցները յաւելեալ ջանք թափեն եւ այս մէկուն իբր արդիւնք՝ մրցակցութիւնը սրեն:

Ի վերջոյ, տղոց թեմիսն ալ մօտաւորապէս 10 տարի առաջ, կը գտնուէր մասն կացութեան մը մէջ, երբ Կորան Իվանիսելիչի (Խրուաթիա) եւ Ռիչըրտ Քրայչէքի (Հոլանտա) մասն արագ սրբով ունեցող մարզիկներ կ'ապրէին իրենց փառքի օրերը եւ սակայն Ակասի եւ անոր մասն արագ եւ խորամանկ խաղացողներ շուտով յաջողեցան կացութիւնը իրենց հակակշիռին տակ առնել եւ եկան փաստելու, թէ թեքնիքը կրնայ պարտութեան մատնել ֆիզիքական ուժն ու կարողութիւնները: Այս մէկուն իբր արդիւնք՝ ներկայիս տղոց թեմիսը ամբողջովին տարբեր պատկեր մը կը ներկայացնէ եւ մրցակցութիւնը չափէն աւելի սուր է, հետեւաբար կը մնայ մաղթել, որ աղջիկներու թեմիսն ալ նոյնանման փոփոխութիւն մը կրէ եւ նորանոր դէմքերու փայլքով, Տապլեու.Թի.Էյ. Թուրը կենդանանայ եւ այդ մէկը՝ Հինկիսի մասն հսկայի մը բացակայութեան, որուն գլխաւոր գէնքը միշտ ալ եղած էր իր խորամանկութիւնը եւ ճշգրտութիւնը:

Կը մնայ ամենէն կարեւորը՝ չափաւորութիւնն ու որոշ չափի հեզութիւնը, առանց որոնց ոեւէ խաղացող կրնայ ինքզինք գտնել Հինկիսի ապրած սենարիոյն առջեւ: Երբ բոլոր այս պայմանները կ'ամբողջանան, աղջիկներու թեմիսը անպայմանօրէն կը վերագտնէ իր անցեալի ճոխութիւնը եւ ուրեմն մեզի՝ թեմիսի սիրահարներուս կը մնայ սպասել գալուստին այն խաղացողին, որ ձեռնոց պիտի նետէ Ուիլիըմսներուն եւ մեզ պիտի ազատէ ձանձրոյթէն:

# ՆԱՅԱՍՏԱՆ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ ՆԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԼԱՆՏԱՆ

Եւրո-2004ի գտումի մրցաշարքին, Շաբաթ, 29 Մարտին, Երեւանի Հանրապետական մարզադաշտին վրայ Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբը, որ մաս կը կազմէ Զ. խմբակին, հիւրընկալեց Հիւսիսային Իրլանտան: Թէեւ Արտաւազը եւ Արման Քարամեան երկուորեակները տեսարար վտանգեցին հիւր հաւաքականին բերորը, սակայն մրցումին «որբ» կոչը եկաւ տաղանդաւոր այլ ֆուտպոլիստի մը կողմէ: Արդարեւ, մրցումին աւարտէն չորս վայրկեան առաջ, «Եանկ Պոյզ» ակումբի միջնապահ Արթիւր Պետրոսեան շրջանցելով Հիւսիսային Իրլանտայի բերդապահ Մայք Թէյլըրը, նշանակեց մրցումին «որբ» կոչը եւ Հայաստանի կազմին 2 նորինեց 3 ոսկեայ կէտեր:

Զտումի մրցումներուն սկիզբէն ի վեր Զ. խմբակի դասաւորման վերջին երկու դիրքերը Հիւսիսային Իրլանտայի հետ բաժնեկցել է



ետք, իր այս յաղթանակով Հայաստան բարձրացաւ դասաւորման 3րդ դիրքին (4 կէտ), Սպանիոյ (7 կէտ) եւ Ուրրանիոյ (6 կէտ) ետին: Միեւնոյն խմբակին մէջ Յունաստան ունի 3 կէտ, իսկ Հիւսիսային Իրլանտայի ցարդ հաւաքած միայն մէկ կէտը կը նշանակէ, թէ կազմը թուաբանական հաշիւներով ոչ մէկ յոյս ունի 2004ին Փորթուգալի մէջ տեղի ունենալիք Եւրոպայի ախոյեան ութեան մասնակցելու:

Հայաստանի կազմին նոր նշանակուած մարզիչը՝ Սթոյքա, մրցումէն ետք ըսաւ. «Շատ ուրախ եմ երկար պայքարէ ետք ապահովուած այս յաղթանակով, սակայն յաղթանակը անակնկալ չեմ նկատեր: Այո՛, դաշտ իջնող ֆուտպոլիստները ընտրելու ընթացքին որոշ *նիսք*եր առի, սակայն, ինչպէս որ մրցումը փաստեց, որոշումներս ճիշդ էին: Սթոյքա մերժեց իր կազմէն լաւագոյն խաղարկութիւնը ունեցող ֆուտպոլիստներուն անունները նշել: «Ոչ մէկ ֆուտպոլիստ անհատապէս չեմ ուզեր գովաբանել. կա՛զմը շահեցաւ

մրցումը եւ ամբողջ Հայաստանը շահեցաւ. հիմա պէտք է պատրաստուինք Սպանիոյ դէմ մրցումին», ըսաւ ան:

Հայաստանի եւ Հիւսիսային Իրլանտայի ազգային հաւաքականներուն ճակատումէն օր մը առաջ, վերոնշեալ երկիրներուն երիտասարդական կազմերու ճակատումին նոյնպէս յաղթական դուրս եկաւ հայրենի կազմը: Արդարեւ, Արովեանի «Կոտայք» մարզադաշտին վրայ Հայաստանի 21 տարեկանէն վար խումբը իւրաքանչիւր կիսախաղին արձանագրելով մէկական կոլ-2 - 0 արդիւնքով դուրս եկաւ դաշտէն: Մրցումին հաշիւը բացաւ Արսէն Միլոյեան՝ 25րդ վայրկեանին, իսկ 72րդ վայրկեանին Վահէ Դաւիթեան նշանակեց 2րդ կոլը:

Նշենք, որ Հայաստանի երիտասարդական կազմին մարզիչն է Անդրանիկ Ադամեան:

Նշենք, որ Հայաստանի երիտասարդական կազմին մարզիչն է Անդրանիկ Ադամեան:



## Computer Echo

Echo PC With The Intel Pentium 4 Processor, The Center Of Your Digital World

The Sky Is  
The Limit

Take Outstanding Digital Photos  
Play Intense 3-D Games  
With Echo PC And The Intel  
Pentium 4 Processor

Computer Echo S.a.r.l Lebanon  
Tel 1-488106 (15 lines) Fax 488109  
Cell 734298 / 624714  
e.mail echo@dm.net.lb  
Saloumeh Hyway Ariss Center  
Beirut Lebanon

Echo Dubai L.L.C. UAE  
Khaled Bin Al-Waleed St.  
Mohd Sultan Beishalat Bldg.  
Tel 971-4-3930091 Cell 971-5-4544072  
e.mail echodxb@emirates.net.ae

2001 Intel Corporation, All Rights Reserved, Intel Inside Logos, pentium 4 processor logo and Intel Netburst are trademarks of Intel corporation or its subsidiaries in the united states and other countries. Other brands and trademarks are the property of their respective owners.